

Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

Մ Ն Ն Դ Ա Յ Ի Ն Հ Ա Վ Ե Լ Ո Ւ Մ Ն Ե Բ Ի Ն Ն Ե Բ Կ Ա Յ Ա Ց Վ Ո Ղ Պ Ա Հ Ա Ն Ջ Ն Ե Բ Ի

I. Կ Ի Բ Ա Ռ Մ Ա Ն Ո Լ Ո Ր Տ Ը

1. Սննդային հավելումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը (այսուհետ՝ տեխնիկական կանոնակարգ) տարածվում է Հայաստանի Հանրապետությունում արտադրվող, ներմուծված և իրացվող սննդամթերքի և սննդային հավելումների վրա:

2. Սույն տեխնիկական կանոնակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում թույլատրելի սննդային հավելումները, դրանց մակնշմանը, փաթեթավորմանը, իրացմանը, օգտագործմանը, օգտահանմանն ու ոչնչացմանը ներկայացվող պահանջները և նույնականացման ընթացակարգերը:

3. Սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված Հայաստանի Հանրապետությունում թույլատրելի սննդային հավելումները ենթակա են համապատասխանության պարտադիր հավաստման:

II. Հ Ի Մ Ն Ա Կ Ա Ն Հ Ա Ս Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Բ Ը

4. Սույն տեխնիկական կանոնակարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) *սննդային հավելման օրական սպառման թույլատրելի չափաքանակ (այսուհետ՝ ՍՀՕՍԹ-Չ)*՝ Կողեքս Ալիմենտարիոս հանձնաժողովի սննդային հավելումների գծով փորձագետների (այսուհետ՝ ԿԱՍՀՓ) գնահատականներով՝ մարմնի կշռին (կգ) համապատասխան սահմանված սննդային հավելման չափաքանակ, որն առողջության

համար վտանգ չի ներկայացնում անգամ կյանքի ընթացքում ամենօրյա սննդակազմում օգտագործելու դեպքում.

2) *չսահմանված ՍՀՕՍԹ-Չ* կիսովում է այն սննդային հավելումների համար, որոնք ըստ քիմիական, կենսաբանական, թունաբանական և գիտականորեն հաստատված այլ տվյալների ունեն շատ ցածր աստիճանի թունավորման հատկություն և ըստ ԿԱՍՀՓ գնահատականների՝ անհրաժեշտ արդյունքի հասնելու նպատակով սննդամթերքի մշակման, վերամշակման կամ պատրաստման գործընթացում դրանց օգտագործման ընդհանուր չափաքանակն սպառողների առողջության համար վտանգ չի ներկայացնում.

3) *սննդային հավելումների օգտագործման ատավելագույն թույլատրելի չափաքանակ* հաշվի առնելով ՍՀՕՍԹ-ը, ըստ ԿԱՍՀՓ-ի՝ սպառողների առողջության համար վտանգ չներկայացնող, հումքի բաղադրիչներում պարունակվող և վերամշակման ընթացքում ուղղակիորեն ավելացվող սննդային հավելումների գումարային ատավելագույն խտությունը պատրաստի արտադրանքում արտահայտված միլիգրամներով 1 կիլոգրամ պատրաստի արտադրանքում (մգ/կգ).

4) *արտադրական պարզաճ գործելակերպի (այսուհետ՝ ԱՊԳ) (Good Manufacturing Practices (GMP)) հիմնական սկզբունքներ*՝ սննդային հավելումների օգտագործմանը ներկայացվող հետևյալ սկզբունքները՝

ա. ցանկալի արդյունքի հասնելու համար սննդամթերքին հնարավորինս նվազագույն քանակությամբ սննդային հավելման ավելացում,

բ. սննդամթերքի արտադրության, մշակման կամ փաթեթավորման ընթացքում սննդամթերքի բաղադրամաս դարձած, ֆիզիկական կամ տեխնիկական այլ ազդեցության նպատակով չօգտագործված սննդային հավելումը վերջնական արտադրանքում հնարավորինս նվազագույն քանակի հասցնում,

գ. օգտագործվող սննդային հավելման, որպես սննդամթերքի բաղադրիչ, սննդամթերքի որակին ներկայացվող պահանջներին համապատասխան մշակում.

5) *սննդամթերքի համակարգված դասակարգում*՝ սննդային հավելումների օգտագործմանը ներկայացվող պահանջների սահմանումը պարզեցնելու նպատակով սննդամթերքի բոլոր տեսակների պայմանական խմբավորում:

III. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5. Մանդային հավելումների օգտագործումը չպետք է ավելացնի սպառողի առողջության վրա մթերքի հնարավոր անբարենպաստ ազդեցության ռիսկի աստիճանը և իջեցնի սննդամթերքի սննդարարության ցուցանիշները (բացառությամբ հատուկ և դիետիկ նշանակության որոշակի տեսակի սննդամթերքի):

6. Հաշվի առնելով ԱՊԳ-ի հիմնական սկզբունքները՝ սննդային հավելումները սննդամթերքին ավելացվում են անհրաժեշտ տեխնոլոգիական արդյունք ստանալու նպատակով, տեխնոլոգիական հրահանգով և (կամ) բաղադրագրով հաստատված չափաքանակներով, բայց ոչ ավելի, քան Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 993 - Ն որոշման N 2 հավելվածի N 2 աղյուսակում նշված առավելագույն թույլատրելի չափաքանակները:

7. Մանդային հավելման օգտագործումը հիմնավորվում է, եթե այն գերադասելի է, բացակայում է սպառողի առողջության վրա ռիսկային ազդեցությունը, սպառողին չի զգում թյուրիմացության մեջ և օգտագործվում է մեկ կամ մի քանի տեխնոլոգիական նպատակներով, որոնց հնարավոր չէ հասնել տնտեսապես և տեխնիկապես հասանելի այլ միջոցներով

1) սննդամթերքի բնական և սննդարար հատկությունները պահպանելու, սննդային արժեքը կանխամտածված նվազեցնելու (բացառապես 2-րդ ենթակետում նշված սննդամթերքի համար), ինչպես նաև այն դեպքում, երբ սննդամթերքը չի կազմում ընդունված օրաբաժնի նշանակալի մաս:

2) հատուկ դիետա պահպանող սպառողների առանձին խմբի համար նախատեսված սննդամթերքում որոշ բաղադրամասերի կամ սննդարար տարրերի (սննդային նյութերի) կանխամտածված ավելացնելու կամ պակասեցնելու:

3) սննդամթերքի կայունությունն ապահովելու, պահման ժամանակահատվածն ավելացնելու կամ զգայորոշման ցուցանիշները բարելավելու համար՝ պայմանով, որ սննդամթերքի տեսքը, բնույթը, որակը չեն փոխվելու և սպառողին մոլորության մեջ չեն զգելու:

4) նախապատրաստման, մշակման, պատրաստման, փաթեթավորման, փոխադրման, պահման և այլ գործընթացներում անհրաժեշտ որոշակի նպատակների համար՝ պայմանով, որ սննդային հավելումը չի թաքցնելու անորակ հումքի օգտագործումը կամ արտադրական շղթայում անցանկալի (այդ թվում ոչ հիգիենիկ) գործընթացները:

8. Արգելվում է հումքից կամ այլ բաղադրիչներից սննդային հավելումների փոխանցումն սպառողների հետևյալ խմբերի համար նախատեսված սննդամթերքում,

բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 993 - Ն որոշման N 2 հավելվածի N 2 աղյուսակում նշված խմբերի՝

1) կաթնային խառնուրդներ նորածինների (մինչև 12 ամսական երեխաներ) համար, կաթնային խառնուրդներ և հատուկ բուժիչ կաթնային խառնուրդներ վաղ տարիքի երեխաների (6-12 ամսական երեխաներ) համար.

2) լրացակեր վաղ տարիքի երեխաների և մանուկների (1-3 տարեկան երեխաներ) համար:

9. Մանդային հավելումները մթերքում կարող են մնալ ամբողջությամբ կամ մասնակի անփոփոխ, կամ սննդամթերքի բաղադրամասերի և հավելումի քիմիական փոխազդեցության հետևանքով առաջացած նյութերի ձևով:

10. Մթերքի վերականգնման կամ սննդային արժեքի բարձրացման նպատակով սննդամթերքին ավելացվող նյութերը (օրինակ՝ վիտամիններ, ամինաթթուներ, որոշ միկրոէլեմենտներ և այլն) սննդային հավելումներ չեն համարվում:

11. Այն սննդային հավելումները, որոնց համար ՍՀՕՍԹ-Չ սահմանված չեն, ներկայացված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 993 - Ն որոշման N 2 հավելվածի N 3 աղյուսակում:

12. Այն սննդամթերքը կամ սննդամթերքի խմբերը, որոնց համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 993 - Ն որոշման N 2 հավելվածի N 3 աղյուսակում նշված սննդային հավելումների օգտագործումը կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 993 - Ն որոշման N 2 հավելվածի N 2 աղյուսակին համապատասխան, ներկայացված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 993 - Ն որոշման N 2 հավելվածի N 4 աղյուսակում:

IV. ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

13. Սննդամթերքի համակարգված դասակարգումը (Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 993 - Ն որոշման N 2 հավելվածի N 1 աղյուսակ) սննդամթերքի բոլոր տեսակների ոչ պաշտոնական պայմանական խմբավորում է, որը չի կարող օգտագործվել մակնշման նպատակով և հիմնված է հետևյալ սկզբունքների վրա՝

1) ստորակարգային (հիերարխիկ) է, այսինքն, եթե սննդային հավելումը թույլատրվում է օգտագործել սննդամթերքի որևէ խմբի կամ ենթախմբի սննդամթերքում, և որևէ սահմանափակում նախատեսված չէ, ապա այդ սննդային հավելումը թույլատրվում է օգտագործել նաև դրանց ենթախմբերի սննդամթերքում:

2) հիմնված է իրացվող սննդամթերքի տեսակների և տարատեսակների նույնականացման հնարավորության վրա, եթե այլ բան նշված չէ:

3) հաշվի է առնված փոխանցման սկզբունքը, այսինքն համակարգը չի ներառում խառը բաղադրամասերով սննդամթերքը (օրինակ՝ պիցցան, քանի որ այն համամասնորեն կարող է պարունակել բաղադրամասերի համար թույլատրված բոլոր սննդային հավելումները)՝ բացառությամբ այն սննդամթերքի, որը կարիք ունի այնպիսի սննդային հավելման, որի օգտագործումը թույլատրված չէ բաղադրիչներից որևէ մեկի համար:

V. ՄՆՆԴԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ ՄԱԿՆՇՄԱՆԸ, ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆԸ ԵՎ ԻՐԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

14. Հայաստանի Հանրապետություն ներմուծվող սննդային հավելումների մակնշումը պետք է համապատասխանի «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետություն ներմուծվող սննդամթերքի ու սննդային հավելումների վերաբերյալ հայերեն տեղեկատվության մակնշման ձևերին և բովանդակությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N 1838-Ն որոշմամբ և սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին:

15. Հայաստանի Հանրապետությունում իրացվող սննդային հավելման յուրաքանչյուր փաթեթավորում պետք է պարունակի համապատասխան ծածկագրի կամ տեղեկատվություն, որը հնարավորություն կտա նույնականացնելու տվյալ խմբաքանակն ու դրա արտադրողին կամ ներմուծողին:

16. Հայաստանի Հանրապետությունում իրացվող սննդային հավելումների մակնշման ժամանակ պետք է նշվեն E դասիչը և անվանումը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 993 - Ն որոշման N 2 հավելվածի: Եթե որևէ սննդային հավելում ունի ընդհանուր կիրառություն ստացած (հանրահայտ) անվանում, ապա կարող է նշվել այդ անվանումը:

17. Համակցված սննդային հավելումներում երկու կամ ավելի սննդային հավելումների առկայության դեպքում դրանց անվանումներն ու քանակները պետք է ներկայացվեն ցանկով՝ ըստ տարայի ընդհանուր պարունակությունում դրանց տեսակարար կշռի ցուցանիշի նվազման: Եթե համակցված սննդային հավելումները պարունակում են նաև սննդային բաղադրամասեր, ապա դրանք ևս նույն կարգով պետք է նշված լինեն սննդային հավելումների ցանկում:

18. Համային կամ բուրավետացնող խառնուրդների վրա սույն կանոնակարգի 17-րդ կետի պահանջը չի տարածվում: Այս դեպքում բավական է նշել տեխնոլոգիական ֆունկցիան (օրինակ՝ «բուրավետացնող նյութ») և համի կամ բույրի բնույթը: Համաբուրավետիչ նյութերը պետք է պարունակեն նաև դրանց ծագումը բնութագրող «բնական», «բնականին նույնականացված» կամ «արհեստական» արտահայտությունները կամ դրանց զուգակցությունը՝ կախված կոնկրետ դեպքերից: Սույն դրույթը չի տարածվում համի ձևավորիչների վրա:

19. Մակնշվածքի կամ պիտակի տեսանելի մասում պետք է զետեղվի «Մանրում օգտագործման համար» կամ դրան համարժեք այլ տեղեկատվություն:

20. Սննդային հավելումների գտաքաշը պետք է նշվի՝

1) հեղուկ, կիսաալինդ կամ մածուցիկ սննդային հավելումների համար՝ ծավալով կամ կշռով.

2) պինդ, այդ թվում՝ հաբերի տեսքով վաճառվող սննդային հավելումների համար՝ կշռով: Հաբերի տեսքով վաճառվող սննդային հավելումների դեպքում պետք է նշվի նաև փաթեթվածքում պարունակվող հաբերի քանակը:

21. Արգելվում է E 127, E 154, E 160b, E 161g, E 173 և E 180 սննդային հավելումների (ներկանյութեր) իրացումը մանրածախ առևտրի կետերում:

22. Ազելվում է E 410, E 412, E 415 և E 417 սննդային հավելումների օգտագործումը ջրազրկված՝ մինչև ուտելը թրջում պահանջող սննդամթերքում:

23. Արգելվում է E 400, E 401, E 402, E 403, E 404, E 406, E 407, E 407a, E 410, E 412, E 413, E 414, E 415, E 417, E 418 և (կամ) E 440 սննդային հավելումների օգտագործումը փոքր փաթեթավորմամբ (մեկանգամյա ուտելու համար) դոնդողներում, դոնդողանման հրուշակեղենում:

24. Արգելվում է E 425 սննդային հավելման օգտագործումը դոնդողանման հրուշակեղենում և փոքր տարաներում փաթեթավորված դոնդողներում:

25. Եթե սննդային հավելումը մշակվել է իոնային ճառագայթներով, ապա մակնշվածքում պետք է նշվի դրա մասին:

26. Հայաստանի Հանրապետությունում իրացվող սննդամթերքում սննդային հավելումների առկայության դեպքում մակնշման ժամանակ պետք է նշվեն սննդային հավելման անվանումը և E դասիչը (օրինակ՝ տարտրազին E 102, սորբինաթթու E 200) կամ տեխնոլոգիական ֆունկցիան և E դասիչը (օրինակ՝ ներկանյութ՝ E 102, պահածոյացնող նյութ՝ E 200):

27. Եթե սննդային հավելումն ունի մի քանի տեխնոլոգիական ֆունկցիաներ, ապա նշվում է այն տեխնոլոգիական ֆունկցիան, որը համապատասխանում է տվյալ արտադրանքում դրա օգտագործման նպատակին:

VI. ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ

28. Սննդային հավելումների նույնականացումը պետք է իրականացնեն դրա, ինչպես նաև սննդամթերքի արտադրման, պահման, փոխադրման և իրացման փուլերում իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը, ինչպես նաև սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին սննդային հավելումների և սննդամթերքի համապատասխանության հավաստման և պետական վերահսկողության մարմինները:

29. Նույնականացումն իրականացնում են՝

- 1) սերտիֆիկացման մարմինները՝ համապատասխանության հավաստման ժամանակ.
- 2) պետական վերահսկողության մարմինները՝ վերահսկողություն իրականացնելիս, իրենց իրավասության սահմաններում.
- 3) այլ մարմիններ և կազմակերպություններ՝ նախաձեռնության կարգով, սննդային հավելումների կամ սննդամթերքի վերաբերյալ տրամադրված տեղեկատվության համապատասխանությունը հավաստելու անհրաժեշտության դեպքում:

30. Կախված նույնականացման խնդիրներից՝ կիրառվում են նույնականացման հետևյալ եղանակները՝

- 1) փաստաթղթային փորձաքննություն.
- 2) սննդային հավելման կամ սննդամթերքում դրա պարունակության փորձարկում:

31. Փաստաթղթային փորձաքննությամբ նույնականացումն իրականացնելու դեպքում պետք է ստուգվեն սննդային հավելման կամ սննդամթերքի սպառողական և փոխադրական տարաների կամ դրանց պիտակների վրա նշված մակնշվածքի

բովանդակության համապատասխանությունն ապրանքաուղեկից փաստաթղթերում տրված տեղեկատվությանը:

32. Մանրային հավելման կամ սննդամթերքում դրա պարունակության փորձարկմամբ նույնականացումը պետք է կատարվի ըստ սննդային հավելումների նորմատիվ տեխնիկական փաստաթղթերով սահմանված զգայորոշման բնութագրերի, ֆիզիկաքիմիական ցուցանիշների և Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և իրացվող սննդամթերքում թույլատրվող սննդային հավելումների օգտագործման սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված առավելագույն թույլատրելի չափաքանակների:

33. Նույնականացման արդյունքների վերաբերյալ կազմվում է եզրակացություն, որը, կախված նույնականացման եղանակից, կարող է բովանդակել՝

- 1) արտադրանքի անվանումը.
- 2) արտադրողի մասին տեղեկատվությունը.
- 3) արտադրության թվականը և պահման ժամկետը.
- 4) փաստաթղթերի փորձաքննության կամ արտադրանքի փորձարկման արդյունքները.
- 5) փաթեթավորման մասին տեղեկատվությունը, այդ թվում՝ սպառողական տարայի և (կամ) խմբակային տարայի և (կամ) անհատական տարայի տարողությունը և քանակությունը.

6) սննդամթերքի կամ սննդային հավելման տվյալ խմբաքանակի նույնականացման համար օգտագործվող նշանը:

VII. ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՎ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՄՆՆԴԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ ՕԳՏԱՀԱՆՈՒՄԸ ԵՎ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ

34. Վտանգավոր և (կամ) ժամկետանց սննդային հավելումների օգտահանումը և ոչնչացումը կատարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 12-ի «Վտանգավոր սննդամթերքի, վտանգավոր անասնակերի, սննդամթերքի հետ շփվող վտանգավոր նյութերի և վտանգավոր սննդային հավելումների օգտահանման և ոչնչացման կարգը սահմանելու մասին» N 824-Ն որոշմամբ հաստատված կարգով:

VIII. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

35. Սույն տեխնիկական կանոնակարգով և նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջներին սննդային հավելման համապատասխանությունը հավաստելու համար արտադրողը, մատակարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչը պետք է ներկայացնի Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 12-ի «Արտադրանքի կամ ծառայությունների համապատասխանության պարտադիր հավաստման համար կիրառվող սխեմաները և դրանց նույնականացման նշագրերը սահմանելու մասին» N 1170-Ն որոշմամբ սահմանված 2h, 3h, 4h հայտարարագրման սխեմաներից որևէ մեկով հավաստված համապատասխանության հայտարարագիր կամ 2ս, 3ս, 4ս, 5ս կամ 6ս սերտիֆիկացման սխեմաներից որևէ մեկով հավաստված համապատասխանության սերտիֆիկատ:

36. Արտադրողը, մատակարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչը սննդային հավելման սպառողական տարայի և (կամ) խմբակային տարայի և (կամ) անհատական տարայի վրա կամ ապրանքաուղեկից փաստաթղթերում կարող է գետեղել համապատասխանության նշանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 9-ի «Համապատասխանության նշանի պատկերը, դրան ներկայացվող տեխնիկական պահանջները և կիրառման կարգը հաստատելու մասին» N 1281-Ն որոշմամբ հաստատված կարգով:

37. Սերտիֆիկացման մարմինը փորձարկումներ կատարելու նպատակով նմուշառումն իրականացնում է արտադրողի, մատակարարի կամ նրա լիազոր ներկայացուցչի մասնակցությամբ, տվյալ խմբաքանակը բնորոշող նվազագույն բավարար քանակով՝ ըստ համապատասխան ստանդարտով սահմանված նմուշառման կարգի:

38. Հավատարմագրված փորձարկման լաբորատորիան փորձարկումները պետք է կատարի համապատասխան ստանդարտներով սահմանված փորձարկման մեթոդներով:

39. Սննդային հավելման նույնականացումն իրականացնում են սույն տեխնիկական կանոնակարգի 30-րդ կետով նախատեսված ընթացակարգով:

40. Սերտիֆիկացման մարմինը հայտատուին համապատասխանության սերտիֆիկատ հանձնելու ժամանակ նրա հետ կնքում է համապատասխանության սերտիֆիկատի օգտագործման մասին պայմանագիր, եթե սերտիֆիկացման գործողությունները կատարվել են 2ս-5ս սխեմաներից որևէ մեկով:

41. Համապատասխանության սերտիֆիկատի կամ համապատասխանության հայտարարագրի գործողության ժամկետի ընտրությունը պետք է կատարվի ըստ իրականացված համապատասխանության հավաստման սխեմայի՝

1) 2h կամ 2ս կամ 6ս սխեմայի դեպքում 12 ամիս.

2) 4h սխեմայի դեպքում ըստ սննդային հավելման պիտանիության ժամկետի, բայց 3 տարվանից ոչ ավելի.

3) 3ս սխեմայի դեպքում 24 ամիս.

4) 3h, 4ս կամ 5ս սխեմայի դեպքում 36 ամիս:

42. Սերտիֆիկացված սննդային հավելման համապատասխանության հսկողությունն իրականացվում է համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետի ընթացքում, առնվազն տարեկան մեկ անգամ սույն տեխնիկական կանոնակարգի 40-րդ կետում նշված պայմանագրի հիման վրա:

43. Համաձայն «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ համապատասխանության հսկողության արդյունքների հիման վրա սերտիֆիկացման մարմինը կասեցնում կամ դադարեցնում է իր կողմից տրված համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը՝ սույն տեխնիկական կանոնակարգի և նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջներին սննդային հավելման անհամապատասխանության դեպքում: Համապատասխանության սերտիֆիկատի գործողության կասեցման կամ դադարեցման պայմանները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 12-ի N 1170-Ն որոշմամբ:

44. Համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու դեպքում սերտիֆիկացմանը մարմինը դրա մասին տեղեկացնում է համապատասխանության սերտիֆիկատը տնօրինողին և գրավոր ծանուցում ստուգումներ իրականացնող իրավասու մարմիններին:

IX. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

45. Սույն տեխնիկական կանոնակարգով և նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջներին սննդային հավելման համապատասխանության և անվտանգության նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացվում է

«Համապատասխանության գնահատման մասին» և «Մնդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ց Ա Ն Կ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ
 ՄՆՆԴԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ**

E դասիչը	Մանդային հավելման անվանումը (աննդային հավելման լատինական գրառումը)
1	2
E 100	Կուրկումին (Curcumin)
E 101	Ռիբոֆլավիններ (Riboflavins) (i) Ռիբոֆլավին (Riboflavin) (ii) Ռիբոֆլավին 5'-ֆոսֆատ (Riboflavin 5'-phosphate)
E 102	Տարտրազին (Tartrazine)
E 104	Դեղին քինոլինային (Quinoline Yellow)
E 110	Դեղին մայրամուտ (Sunset Yellow FCF, Orange Yellow S)
E 120	Կարմիններ (Cochineal, Carminic acid, Carmines)
E 122	Ազոռուբին, Կարմուազին (Azorubine, Carmoisine)
E 124	Պոնսո 4R, Մուգ կարմիր A (Ponceu 4R, Cochineal red A)
E 127	Էրիթրոզին (Erythrosine)
E 129	Կարմիր հրապուրիչ AC (Allura red AC)
E 131	Պատենտավորված կապույտ V (Patent blue V)
E 132	Ինդիգոտին, Ինդիգո կարմին (Indigotine, Indigo carmine)
E 133	Փայլուն կապույտ FCF (Brilliant blue FCF)
E 140	Քլորոֆիլներ-քլորոֆիլիններ (Chlorophylls-chlorophyllins) (i) Քլոֆիլներ (Chlorophylls) (ii) Քլորոֆիլիններ (Chlorophyllins)
E 141	Քլորոֆիլների և քլորոֆիլինների պղնձային համալիրներ (Copper complex of chlorophylls and chlorophyllins) (i) Քլորոֆիլի պղնձային համալիր (Copper complex of chlorophylls) (ii) Քլորոֆիլինի պղնձային համալիր (Copper complexes of chlorophyllins)
E 142	Կանաչ S (Green S)
E 150a	Շաքարի կոլեր I սովորական (Caramel I-Plain)
E 150b	Շաքարի կոլեր II, ստացված հիմնասուլֆիտային տեխնոլոգիայով (Caramel II-Caustic sulphite process)
E 150c	Շաքարի կոլեր III, ստացված ամոնիակային տեխնոլոգիայով (Caramel III-Ammonia process)
E 150d	Շաքարի կոլեր IV, ստացված ամոնիակասուլֆիտային տեխնոլոգիայով (Caramel IV-Ammonia sulphite process)
E 151	Փայլուն սև PN (Brilliant black PN)
E 153	Ածուխ բուսական (Vegetable carbon)
E 154	Շագանակագույն FK (Brown FK)

1	2
E 155	Շագանակագույն HT (Brown HT)
E 160a	Կարոտիններ (Carotenes) (i) Բետա-կարոտին սինթետիկ (Beta-Carotene synthetic) (ii) Բետա-կարոտինի բնական մզվածքներ (Beta-Carotene natural extracts)
E 160b	Աննատո, Բիքսին, Նորբիքսին (Annatto, Bixin, Norbixin)
E 160c	Պապրիկայի մզվածք, կապսանտին, կապսոնոբին (Paprika extract, capsanthin, capsorubin)
E 160d	Լիկոպեն (Lycopene)
E 160e	Բետա-ապո-8'-կարոտինային ալդեհիդ (C 30) (Beta-apo-8'-carotenal (C 30))
E 160f	Բետա-ապո-8'-կարոտինային ալդեհիդի էթիլային եթեր (Ethyl ester of beta-apo-8'-carotenal (C 30))
E 161b	Լյուտեին (Lutein)
E 161g	Կանտաքսանտին (Canthaxanthin)
E 162	Կարմիր բազուկային, բետանին (Beetroot red, betanin)
E 163	Անտոցիաններ (Anthocyanins)
E 170	Կալցիումի կարբոնատ (Calcium carbonate)
E 171	Տիտանի երկօքսիդ (Titanium dioxide)
E 172	Երկաթի օքսիդներ (Iron oxides and hydroxides)
E 173	Ալյումինիում (Aluminium)
E 174	Արծաթ (Silver)
E 175	Ոսկի (Gold)
E 180	Լիթոռուբին BK (Lithorubine BK)
E 200	Սորբինաթթու (Sorbic acid)
E 202	Կալիումի սորբատ (Potassium sorbate)
E 203	Կալցիումի սորբատ (Calcium sorbate)
E 210	Բենզոաթթու (Benzoic acid)
E 211	Նատրիումի բենզոատ (Sodium benzoate)
E 212	Կալիումի բենզոատ (Potassium benzoate)
E 213	Կալցիումի բենզոատ (Calcium benzoate)
E 214	Պարահիդրոքսիբենզոաթթվի էթիլային եթեր (Ethyl-p-hydroxybenzoate)
E 215	Պարահիդրոքսիբենզոաթթվի էթիլային եթերի նատրիումական աղ (Sodium ethyl-p-hydroxybenzoate)
E 218	Պարահիդրոքսիբենզոաթթվի մեթիլային եթեր (Methyl-p-hydroxybenzoate)
E 219	Պարահիդրոքսիբենզոաթթվի մեթիլային եթերի նատրիումական աղ (Sodium methyl-p-hydroxybenzoate)
E 220	Ծծմբի երկօքսիդ (Sulphur dioxide)
E 221	Նատրիումի սուլֆիտ (Sodium sulphite)
E 222	Նատրիումի հիդրոսուլֆիտ (Sodium hydrogen sulphite)
E 223	Նատրիումի պիրոսուլֆիտ (Sodium metabisulphite)
E 224	Կալիումի պիրոսուլֆիտ (Potassium metabisulphite)
E 226	Կալցիումի սուլֆիտ (Calcium sulphite)
E 227	Կալցիումի հիդրոսուլֆիտ (Calcium hydrogen sulphite)
E 228	Կալիումի հիդրոսուլֆիտ (Potassium hydrogen sulphite)
E 230	Բիֆենիլ, Դիֆենիլ (Biphenyl, Diphenyl)
E 231	Օրթոֆենիլֆենոլ (Orthophenyl phenol)
E 232	Օրթոֆենիլֆենոլ նատրիումական աղ (Sodium Orthophenyl phenol)

1	2
E 234	Նիզին (Nisin)
E 235	Նատամիցին (Natamycin)
E 239	Հեքսամեթիլենտետրամին (Hexamethylene tetramine)
E 242	Դիմեթիլդիկարբոնատ (Dimethyl dicarbonate)
E 249	Կալիումի նիտրիտ (Potassium nitrite)
E 250	Նատրիումի նիտրիտ (Sodium nitrite)
E 251	Նատրիումի նիտրատ (Sodium nitrate)
E 252	Կալիումի նիտրատ (Potassium nitrate)
E 260	Քացախաթթու (Acetic acid)
E 261	Կալիումի ացետատ (Potassium acetate)
E 262	Նատրիումի ացետատ (Sodium Acetates) (I) Նատրիումի ացետատ (Sodium Acetate) (ii) Նատրիումի ացետատ 1-փոխարինված (Sodium hydrogen acetates)
E 263	Կալցիումի ացետատ (Calcium acetate)
E 270	Կաթնաթթու L-, D- և DL- (Lactic acid, L-, D- and DL-)
E 280	Պրոպիոնաթթու (Propionic acid)
E 281	Նատրիումի պրոպիոնատ (Sodium propionate)
E 282	Կալցիումի պրոպիոնատ (Calcium propionate)
E 283	Կալիումի պրոպիոնատ (Potassium propionate)
E 284	Բորաթթու (Boric acid)
E 285	Նատրիումի տետրաբորատ, բորաքս (Sodium tetraborate, borax)
E 290	Ածխածնի երկօքսիդ (Carbon dioxide)
E 296	Խնձորաթթու DL- (Malic acid DL-)
E 297	Ֆումարաթթու (Fumaric acid)
E 300	Ասկորբինաթթու L- (Ascorbic acid L-)
E 301	Նատրիումի ասկորբատ (Sodium ascorbate)
E 302	Կալցիումի ասկորբատ (Calcium ascorbate)
E 304	Ասկորբինաթթվի ճարպաթթվային էսթերներ (Fatty acid esters of ascorbic acid) (i) Ասկորբիլ պալմիտատ (Ascorbyl palmitate) (ii) Ասկորբիլ ստեարատ (Ascorbyl stearate)
E 306	Տոկոֆերոլների խառնուրդի խտանյութ (Mixed Tocopherols Concentrate)
E 307	Ալֆա-տոկոֆերոլ (Alpha-tocopherol)
E 308	Գամա-տոկոֆերոլ (Gamma-tocopherol)
E 309	Դելտա-տոկոֆերոլ (Delta-tocopherol)
E 310	Պրոպիլգալատ (Propyl gallate)
E 311	Օքտիլգալատ (Octyl gallate)
E 312	Դոդեցիլգալատ (Dodecyl gallate)
E 315	Էրիտորբաթթու (Erythorbic Acid)
E 316	Նատրիումի էրիտորբատ (Sodium erythorbate)
E 319	Երրորդիկհիդրոքսի (Tertiary Butylhydroquinone(TBHQ))
E 320	Բութիլհիդրօքսիանիզոլ (Butylated hydroxyanisole(BHA))
E 321	Բութիլհիդրօքսիտոլուոլ (Butylated hydroxytoluene(BHT))
E 322	Լեցիտիններ (Lecithins)
E 325	Նատրիումի լակտատ (Sodium lactate)
E 326	Կալիումի լակտատ (Potassium lactate)

1	2
E 327	Կալցիումի լակտատ (Calcium lactate)
E 330	Կիտրոնաթթու (Citric acid)
E 331	Նատրիումի ցիտրատներ (Sodium citrates) (i) Նատրիումի ցիտրատ 1-փոխարինված (Monosodium citrate) (ii) Նատրիումի ցիտրատ 2-փոխարինված (Disodium citrate) (iii) Նատրիումի ցիտրատ 3-փոխարինված (Trisodium citrate)
E 332	Կալիումի ցիտրատներ (Potassium citrates) (i) Կալիումի ցիտրատ 1-փոխարինված (Monopotassium citrate) (ii) Կալիումի ցիտրատ 3-փոխարինված (Tripotassium citrate)
E 333	Կալցիումի ցիտրատներ (Calcium citrates) (i) Կալցիումի ցիտրատ 1-փոխարինված (Monocalcium citrate) (ii) Կալցիումի ցիտրատ 2-փոխարինված (Dicalcium citrate) (iii) Կալցիումի ցիտրատ 3-փոխարինված (Tricalcium citrate)
E 334	Գինեթթու (L(+)-) (Tartaric Acid (L(+)-))
E 335	Նատրիումի տարտրատներ (Sodium Tartrates) (i) Նատրիումի տարտրատ 1-փոխարինված (Monosodium tartrate) (ii) Նատրիումի տարտրատ 2-փոխարինված (Disodium tartrate)
E 336	Կալիումի տարտրատներ (Potassium Tartrates) (i) Կալիումի տարտրատ 1-փոխարինված (Monopotassium tartrate) (ii) Կալիումի տարտրատ 2-փոխարինված (Dipotassium tartrate)
E 337	Կալիումի նատրիումի տարտրատ (Potassium sodium tartrate)
E 338	Ֆոսֆորաթթու (Phosphoric acid)
E 339	Նատրիումի ֆոսֆատներ (Sodium phosphates) (i) Նատրիումի ֆոսֆատ 1-փոխարինված (Monosodium phosphate) (ii) Նատրիումի ֆոսֆատ 2-փոխարինված (Disodium phosphate) (iii) Նատրիումի ֆոսֆատ 3-փոխարինված (Trisodium phosphate)
E 340	Կալիումի ֆոսֆատներ (Potassium phosphates) (i) Կալիումի ֆոսֆատ 1-փոխարինված (Monopotassium phosphate) (ii) Կալիումի ֆոսֆատ 2-փոխարինված (Dipotassium phosphate) (iii) Կալիումի ֆոսֆատ 3-փոխարինված (Tripotassium phosphate)
E 341	Կալցիումի ֆոսֆատներ (Calcium phosphates) (i) Կալցիումի ֆոսֆատ 1-փոխարինված (Monocalcium phosphate) (ii) Կալցիումի ֆոսֆատ 2-փոխարինված (Dicalcium orthophosphate) (iii) Կալցիումի ֆոսֆատ 3-փոխարինված (Tricalcium phosphate)
E 343	Մագնեզիումի ֆոսֆատներ (Magnesium phosphates) (i) Մագնեզիումի ֆոսֆատ 1-փոխարինված (Monomagnesium phosphate) (ii) Մագնեզիումի ֆոսֆատ 2-փոխարինված (Dimagnesium phosphate)
E 350	Նատրիումի մալատներ (Sodium malates) (i) Նատրիումի մալատ (Sodium malate) (ii) Նատրիումի մալատ 1-փոխարինված (Sodium hydrogen malate)
E 351	Կալիումի մալատ (Potassium malate)
E 352	Կալցիումի Մալատներ (Calcium malates) (i) Կալցիումի մալատ (Calcium malate) (ii) Կալցիումի մալատ 1-փոխարինված (Calcium hydrogen malate)
E 353	Մեթազինեթթու (Metatartaric acid)
E 354	Կալցիումի տարտրատ (D, L-) (Calcium Tartrate D, L-)

1	2
E 355	Ադիպինաթթու (Adipic acid)
E 356	Նատրիումի ադիպատ (Sodium adipate)
E 357	Կալիումի ադիպատ (Potassium adipate)
E 363	Սաթաթթու (Succinic acid)
E 380	Եռամոնիումի ցիտրատ (Triammonium citrate)
E 385	Կալցիում-նատրիումի էթիլենդիամինտետրաացետատ (Calcium disodium ethylene diamine tetra-acetate)
E 392	Հազրեվարդի մզվածք (Extract of rosemary)
E 400	Ալգինաթթու (Alginic acid)
E 401	Նատրիումի ալգինատ (Sodium alginate)
E 402	Կալիումի ալգինատ (Potassium alginate)
E 403	Ամոնիումի ալգինատ (Ammonium alginate)
E 404	Կալցիումի ալգինատ (Calcium alginate)
E 405	Պրոպան-1,2-դիոլ ալգինատ (Propane-1,2-diol alginate)
E 406	Ագար (Agar)
E 407	Կարագինան (Carrageenan)
E 407a	Կարագինա (վերամշակված Էուչեումա ջրիմուռ) (Processed eucheuma seaweed (PES))
E 410	Եղջերենու խեժ (Locust bean gum)
E 412	Գուարային խեժ (Guar gum)
E 413	Տրագականտի խեժ (Tragacanth gum)
E 414	Արաբիկայի խեժ (Gum arabic (Acacia gum))
E 415	Քսանտանային խեժ (Xanthan gum)
E 416	Կարայի խեժ (Karaya gum)
E 417	Տարի խեժ (Tara gum)
E 418	Հելանային խեժ (Gellan gum)
E 420	Սորբիտներ (Sorbitols) (i) Սորբիտ (Sorbitol) (ii) Սորբիտային օշարակ (Sorbitol Syrup)
E 421	Մանիտ (Mannitol)
E 422	Գլիցերին (Glycerol)
E 425	Կոնժակ (Konjac) (i) Կոնժակային խեժ (Konjac gum) (ii) Կոնժակային գլուկոմանան (Konjac glucomannan)
E 426	Սոյայի հեմիցելյուլոզա (Soybean hemicellulose)
E 427	Կասսիայի խեժ (Cassia gum)
E 431	Պոլիօքսիէթիլեն (40) ստեարատ (Polyoxyethylene (40) Stearate)
E 432	Պոլիօքսիէթիլեն սորբիտան մոնոլաուրատ (պոլիսորբատ 20) (Polyoxyethylene sorbitan monolaurate (polysorbate 20))
E 433	Պոլիօքսիէթիլեն սորբիտան մոնոօլեատ (պոլիսորբատ 80) (Polyoxyethylene sorbitan monooleate (polysorbate 80))
E 434	Պոլիօքսիէթիլեն սորբիտան մոնոպալմիտատ (պոլիսորբատ 40) (Polyoxyethylene sorbitan monopalmitate (polysorbate 40))
E 435	Պոլիօքսիէթիլեն սորբիտան մոնոստեարատ (պոլիսորբատ 60) (Polyoxyethylene sorbitan monostearate (polysorbate 60))

1	2
E 436	Պոլիօքսիէթիլէն սորբիտան եռստեարատ (պոլիսորբատ 65) (Polyoxyethylene sorbitan tristearate (polysorbate 65))
E 440	Պեկտիններ (Pectins) (i) Պեկտին (Pectin) (ii) Ամիդպեկտին (Amidated pectin)
E 442	Ամոնիումի ֆոսֆատիդներ (Ammonium phosphatides)
E 444	Սախարոզաներ ացետատ իզոբուտիրատ (Sucrose acetate isobutyrate)
E 445	Գլիցերինի և խեժաթթուների էստերներ (Glycerol esters of wood resins)
E 450	Պիրոֆոսֆատներ (Diphosphates) (i) Նատրիումի պիրոֆոսֆատ 2-փոխարինված (Disodium diphosphate) (ii) Նատրիումի պիրոֆոսֆատ 3-փոխարինված (Trisodium diphosphate) (iii) Տետրանատրիումի պիրոֆոսֆատ (Tetrasodium diphosphate) (iv) Տետրակալիումի պիրոֆոսֆատ (Tetrapotassium diphosphate) (v) Կալցիումի պիրոֆոսֆատ 2-փոխարինված (Dicalcium diphosphate) (vi) Կալցիումի դիհիդրոպիրոֆոսֆատ (Calcium dihydrogen diphosphate)
E 451	Եռֆոսֆատներ (Triphosphates) (i) Նատրիումի եռֆոսֆատ 5-փոխարինված (Pentasodium triphosphate) (ii) Կալիումի եռֆոսֆատ 5-փոխարինված (Pentapotassium triphosphate)
E 452	Պոլիֆոսֆատներ (Polyphosphates) (i) Նատրիումի պոլիֆոսֆատ (Sodium polyphosphate) (ii) Կալիումի պոլիֆոսֆատ (Potassium polyphosphate) (iii) Կալցիումի պոլիֆոսֆատ (Sodium calcium polyphosphate) (iv) Կալցիումի պոլիֆոսֆատ (Calcium polyphosphate)
E 459	Բետա-ցիկլոդեքստրին (Beta-cyclodextrin)
E 460	Ցելյուլոզա (Cellulose) (i) Ցելյուլոզա միկրոքրիստալին (Microcrystalline cellulose) (ii) Ցելյուլոզա փոշի (Powdered cellulose)
E 461	Մեթիլցելյուլոզա (Methyl cellulose)
E 462	Էթիլցելյուլոզա (Ethyl cellulose)
E 463	Հիդրօքսիպրոպիլցելյուլոզա (Hydroxypropyl cellulose)
E 464	Հիդրօքսիպրոպիլմեթիլցելյուլոզա (Hydroxypropyl methyl cellulose)
E 465	Մեթիլէթիլցելյուլոզա (Methyl ethyl cellulose)
E 466	Կարբօքսիմեթիլցելյուլոզային նատրիումական աղ (Sodium carboxymethyl cellulose)
E 468	Կարբօքսիմեթիլցելյուլոզային նատրիումական աղ՝ միջնուլեկուլային լայնակի կապով (Crosslinked sodium carboxymethyl cellulose)
E 469	Կարբօքսիմեթիլցելյուլոզային նատրիումական աղ, ֆերմենտատիվ հիդրոլիզված (Sodium carboxymethyl cellulose, enzymatically hydrolyzed)
E 470a	Ճարպաթթուների նատրիումական, կալիումական և կալցիումական աղեր (Salts of fatty acids (with base sodium, potassium and calcium))
E470b	Ճարպաթթուներ մագնեզիումի աղեր (Salts of fatty acids (with base magnesium))
E 471	Ճարպաթթուների մոնո և դիգլիցերիդներ (Mono and Di glycerides of Fatty Acids)
E 472a	Գլիցերինի քացախա և ճարպաթթուների էստերներ (Acetic and Fatty Acid Esters of Glycerol)
E 472b	Գլիցերինի կաթնա և ճարպաթթուների էստերներ (Lactic and Fatty Acid Esters of Glycerol)

1	2
E 472c	Գլիցերինի կիտրոնա և ճարպաթթուների էթերներ (Citric and Fatty Acid Esters of Glycerol)
E 472d	Գինեթթվի և ճարպաթթուների մոնո և դիգլիցերիդների էթերներ (Tartaric Acid Esters of Mono- and Di glycerides of Fatty Acid)
E 472e	Գլիցերինի և դիացետիլգինեթթուների և ճարպաթթուների էթերներ (Diacetyltartaric and Fatty Acid Esters of Glycerol)
E 472f	Գլիցերինի և գինե, քացախա և ճարպաթթուների խառը էթերներ (Mixed Tartaric, Acetic and Fatty Acid Esters of Glycerol)
E 473	Սախարոզայի և ճարպաթթուների էթերներ (Sucrose Esters of Fatty Acids)
E 474	Շաքարագլիցերիդներ (Sucroglycerides)
E 475	Պոլիգլիցերինի և ճարպաթթուների էթերներ (Polyglycerol Esters of Fatty Acids)
E 476	Պոլիգլիցերինի և փոխադարձ էթերացված գերչակաթթվի էթերներ (Polyglycerol Esters of Intersterified Ricinoleic Acid)
E 477	Պրոպիլենգլիկոլի և ճարպաթթուների էթերներ (Propylene Glycol Esters of Fatty Acids)
E 479b	Թերմալ օքսիդացված սոյայի յուղը ճարպաթթուների մոնո և դի գլիցերիդների հետ (Thermally oxidized soya bean oil with mono- and di- glycerides of fatty acids)
E 481	Նատրիումի ստեարոիլ-2-լակտիլատ (Sodium stearyl-2-lactylate)
E 482	Կալցիումի ստեարոիլ-2-լակտիլատներ (Calcium stearyl-2-lactylate)
E 483	Ստեարիլտարտրատ (Stearyl tartrate)
E 491	Սորբիտան մոնոստեարատ (Sorbitan monostearate)
E 492	Սորբիտան տրիստեարատ (Sorbitan tristearate)
E 493	Սորբիտան մոնոլաուրատ (Sorbitan monolaurate)
E 494	Սորբիտան մոնոօլեատ (Sorbitan monooleate)
E 495	Սորբիտան մոնոպալմիտատ (Sorbitan monopalmitate)
E 500	Նատրիումի կարբոնատներ (Sodium carbonates) (i) Նատրիումի կարբոնատ (Sodium carbonate) (ii) Նատրիումի հիդրոկարբոնատ (Sodium hydrogen carbonate) (iii) Նատրիումի կարբոնատի և հիդրոկարբոնատի խառնուրդ (Sodium sesquicarbonate)
E 501	Կալիումի կարբոնատներ (Potassium carbonates) (i) Կալիումի կարբոնատ (Potassium carbonate) (ii) Կալիումի հիդրոկարբոնատ (Potassium hydrogen carbonate)
E 503	Ամոնիումի կարբոնատներ (Ammonium carbonates) (i) Ամոնիումի կարբոնատ (Ammonium carbonate) (ii) Ամոնիումի հիդրոկարբոնատ (Ammonium hydrogen carbonate)
E 504	Մագնեզիումի կարբոնատներ (Magnesium carbonates) (i) Մագնեզիումի կարբոնատ (Magnesium carbonate) (ii) Մագնեզիումի հիդրոկարբոնատ (Magnesium hydrogen carbonate)
E 507	Աղաթթու (Hydrochloric acid)
E 508	Կալիումի քլորիդ (Potassium chloride)
E 509	Կալցիումի քլորիդ (Calcium chloride)
E 511	Մագնեզիումի քլորիդ (Magnesium chloride)
E 512	Անագի քլորիդ (Stannous chloride)
E 513	Ծծմբաթթու (Sulphuric acid)

1	2
E 514	Ծծմբաթթվի նատրիումական աղ (Sodium sulphates) i) Ծծմբաթթվային նատրիում (Sodium sulphate) ii) Ծծմբաթթվային հիդրոնատրիում (Sodium hydrogen sulphate)
E 515	Ծծմբաթթվային կալիումներ (Potassium sulphates) i) Ծծմբաթթվային կալիում (Potassium sulphate) ii) Ծծմբաթթվային կալիում (Potassium hydrogen sulphate)
E 516	Ծծմբաթթվային կալցիում (Calcium sulphate)
E 517	Ծծմբաթթվային ամոնիում (Ammonium sulphate)
E 520	Ալյումինիումի սուլֆատ (Aluminium sulphate)
E 521	Ալյումինիում-նատրիումի սուլֆատ (Aluminium sodium sulphate)
E 522	Ալյումինիում-կալիումի սուլֆատ (Aluminium potassium sulphate)
E 523	Ալյումինիում-ամոնիումի սուլֆատ (Aluminium ammonium sulphate)
E 524	Նատրիումի հիդրօքսիդ (Sodium hydroxide)
E 525	Կալիումի հիդրօքսիդ (Potassium hydroxide)
E 526	Կալցիումի հիդրօքսիդ (Calcium hydroxide)
E 527	Ամոնիումի հիդրօքսիդ (Ammonium hydroxide)
E 528	Մագնեզիումի հիդրօքսիդ (Magnesium hydroxide)
E 529	Կալցիումի օքսիդ (Calcium oxide)
E 530	Մագնեզիումի օքսիդ (Magnesium oxide)
E 535	Նատրիումի ֆերոցիանիդ (Sodium ferrocyanide)
E 536	Կալիումի ֆերոցիանիդ (Potassium ferrocyanide)
E 538	Կալցիումի ֆերոցիանիդ (Calcium ferrocyanide)
E 541	Նատրիումի ալյումնֆոսֆատ, թթվային (Sodium aluminium phosphate, acidic)
E 551	Կրեմնիումի երկօքսիդ (Silicon dioxide)
E 552	Կալցիումի սիլիկատ (Calcium Silicate)
E 553a	Մագնեզիումի սիլիկատներ (Magnesium silicates) (i) Մագնեզիումի սիլիկատ (Magnesium silicate)
E 553b	Տալկ (Talc)
E 554	Նատրիումի ալյումնսիլիկատ (Sodium Aluminosilicate)
E 555	Կալիումի ալյումնսիլիկատ (Potassium Aluminosilicate)
E 556	Կալցիումի ալյումնսիլիկատ (Calcium Aluminosilicate)
E 558	Բենտոնիտ (Bentonite)
E 559	Ալյումնսիլիկատ (Կաոլին) (Aluminium Silicate (Kaolin))
E 570	Ճարպաթթուներ (Fatty acids)
E 574	Գլյուկոնաթթու (D-) (Gluconic acid (D-))
E 575	Գլյուկոնա-դելտա լակտոն (Glucono delta-lactone)
E 576	Նատրիումի գլյուկոնատ (Sodium gluconate)
E 577	Կալիումի գլյուկոնատ (Potassium gluconate)
E 578	Կալցիումի գլյուկոնատ (Calcium gluconate)
E 579	Երկաթի գլյուկոնատ (Ferrous gluconate)
E 585	Երկաթի լակտատ (Ferrous lactate)
E 586	4-հեքսիլրեզորցինոլ (4-hexylresorcinol)
E 620	Գլյուտամինաթթու ((L(+)-) (Glutamic acid (L(+)-))
E 621	Նատրիումի գլյուտամատ 1-փոխարինված (Monosodium glutamate)
E 622	Կալիումի գլյուտամատ 1-փոխարինված (Monopotassium glutamate)

1	2
E 623	Կալցիումի գլյուտամատ 2-փոխարինված (Calcium diglutamate)
E 624	Ամոնիումի գլյուտամատ 1-փոխարինված (Monoammonium glutamate)
E 625	Մագնեզիումի գլյուտամատ 2-փոխարինված (Magnesium diglutamate)
E 626	Գուանիլաթթու (Guanylic acid)
E 627	Նատրիումի գուանիլատ 2-փոխարինված (Disodium Guanylate)
E 628	Կալիումի գուանիլատ 2-փոխարինված (Dipotassium Guanylate)
E 629	Կալցիումի գուանիլատ (Calciumm guanylate)
E 630	Ինոզինաթթու (Inosinic acid)
E 631	Նատրիումի ինոզինատ 2-փոխարինված (Disodium inosinate)
E 632	Կալիումի ինոզինատ (Potassium inosinate)
E 633	Կալցիումի ինոզինատ (Calcium inosinate)
E 634	Կալցիումի 5'-ռիբոնուկլեոտիդներ (Calcium 5'-Ribonucleotides)
E 635	Նատրիումի 5'-ռիբոնուկլեոտիդներ 2-փոխարինված (Disodium 5'-Ribonucleotides)
E 640	Գլիցին (Glycine)
E 650	Ցինկի ացետատ (Zinc acetate)
E 900	Պոլիդիմեթիլսիլոքսան (Polydimethylsiloxane)
E 901	Մեղրամոմ, սպիտակ և դեղին (Beeswax, white and yellow)
E 902	Մոմային մոմ (Candelilla wax)
E 903	Կարնաուբի մոմ (Carnauba wax)
E 904	Շելլակ (Shellac)
E 905	Մանրաբյուրեղային մոմ (Microcrystalline wax)
E 907	Հիդրոգենացված պոլի-1-դեցեն (Hydrogenated poly-1-decene)
E 912	Մոնտանաթթվի եթեր (Montan acid ester)
E 914	Օքսիդացված պոլիէթիլենային մոմ (Oxidized polyethylene wax)
E 920	Ցիստեին L- (L-cysteine)
E 927b	Կարբամիդ (Carbamide)
E 938	Արգոն (Argon)
E 939	Հելիում (Helium)
E 941	Ազոտ (Nitrogen)
E 942	Ազոտի օքսիդ (Nitrous Oxide)
E 943a	Բութան (Butane)
E 943b	Իզոբութան (Isobutane)
E 944	Պրոպան (Propane)
E 948	Թթվածին (Oxygen)
E 949	Ջրածին (Hydrogen)
E 950	Կալիումի ացեսուլֆամ (Acesulfame Potassium)
E 951	Ասպարտամ (Aspartame)
E 952	Ցիկլամաթթու և դրա նատրիումական, կալիումական և կալցիումական աղեր (Cyclamic acid and its Na, K, Ca Salts)
E 953	Իզոմալտ (Isomalt)
E 954	Սախարին և դրա նատրիումական, կալցիումական, կալիումական աղեր (Sacharin and its sodium,potassium and calcium salts)
E 955	Սուկրալոզա (Sucralose)
E 957	Տաումատին (Thaumatococin)
E 959	Նեոհեսպերիդին երկհիդրոխալցոն (Neohesperidine dihydrochalcone)

1	2
E 961	Նեոտամ (Neotame)
E 962	Ասպարտամ-ացետուլֆամի աղեր (Salt of aspartame-acesulfame)
E 965	Մալտիտներ (Maltitols) (i) Մալտիտ (Maltitol) (ii) Մալտիտային օշարակ (Maltitol syrup)
E 966	Լակտիտ (Lactitol)
E 967	Քսիլիտ (Xylitol)
E 968	Էրիթրիտ (Erythritol)
E 999	Կվիլայի սզվածք (Quillaja extract)
E 1103	Ինվերտազա (Invertase)
E 1105	Լիզոզիմ (Lysozyme)
E 1200	Պոլիդեքստրոզ (Polydextroses)
E 1201	Պոլիվինիլպիրրոլիդոն (Polyvinylpyrrolidone)
E 1202	Պոլիվինիլպոլիպիրրոլիդոն (Polyvinylpolypyrrolidone)
E 1203	Պոլիվինիլ ալկոհոլ (Polyvinyl alcohol)
E 1204	Պուլուլան (Pullulan)
E 1404	Օքսիդացված օսլա (Oxidized starch)
E 1410	Մոնօսլաֆոսֆատ (Monostarch phosphate)
E 1412	Երկօսլաֆոսֆատ (Distarch phosphate)
E 1413	Ֆոսֆատացված երկօսլաֆոսֆատ (Phosphated distarch phosphate)
E 1414	Երկօսլաֆոսֆատ ացետիլացված (Acetylated distarch phosphate)
E 1420	Ացետիլացված օսլա (Acetylated starch)
E 1422	Ացետիլացված երկօսլաադիպատ (Acetylated distarch adipate)
E 1440	Հիդրօքսիպրոպիլացված օսլա (Hydroxypropyl starch)
E 1442	Հիդրօքսիպրոպիլացված երկօսլաֆոսֆատ (Hydroxypropyl distarch phosphate)
E 1450	Նատրիումի օսլաօկտենիլսաթաթթու (Starch sodium octenyl succinate)
E 1451	Ացետիլացրած, օքսիդացված օսլա (Acetylated oxydized starch)
E 1452	Ալյումինիումի օսլաօկտենիլսաթաթթու (Starch aluminum octenyl succinate)
E 1505	Եռէթիլ ցիտրատ (Triethyl citrate)
E 1517	Գլիցերիլդիացետատ (դիացետին) (Glycerol diacetate (diacetin))
E 1518	Գլիցերիլտրացետատ (տացետին) (Glycerol triacetate (triacetin))
E 1519	Բենզիլ ալկոհոլ (Benzyl alcohol)
E 1520	Պրոպիլենգլիկոլ (Propylene glycol)
E 1521	Պոլիէթիլենգլիկոլ (Polyethylene glycol)

ՄՆԵԴԱՄԹԵՐՔԻ ԽՄԲԱՎՈՐՎԱԾ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Մանրամթերքի խմբի և ենթախմբի դասիչը	Մանրամթերքի խմբի և ենթախմբի անվանումը
01.0	Կաթնամթերք և դրանց փոխարինիչներ՝ բացառությամբ 02.0 խմբի
01.1	Կաթ և կաթնային ըմպելիքներ
01.1.1	Կաթ և թան (անարատ)
01.1.1.1	Կաթ (անարատ)
01.1.1.2	Թան (անարատ)
01.1.2	Կաթնային հիմքով ըմպելիքներ՝ համարուրավետացված և (կամ) ֆերմենտացված (օրինակ՝ կաթնային շոկոլադ, կակաո, ըմպելի յոգուրտներ, շիճուկային հիմքով մթերք)
01.2	Ֆերմենտացման և շիճուկային մակարդման եղանակով ստացված կաթնամթերք (անարատ)՝ բացառությամբ 01.1.2 խմբի
01.2.1	Ֆերմենտացված կաթ (անարատ)
01.2.1.1	Ֆերմենտացված կաթ (անարատ), որը ֆերմենտացումից հետո չի ենթարկվել ջերմային մշակման
01.2.1.2	Ֆերմենտացված կաթ (անարատ), որը ֆերմենտացումից հետո ենթարկվել է ջերմային մշակման
01.2.2	Կաթ՝ շիճուկային մակարդման եղանակով ստացված (անարատ)
01.3	Խտացրած կաթ և փոխարինիչներ (անարատ)
01.3.1	Խտացրած կաթ (անարատ)
01.3.2	Կաթնային հավելումներ ըմպելիքներում
01.4	Սերուցք (անարատ) և փոխարինիչներ
01.4.1	Պաստերացված սերուցք (անարատ)
01.4.2	Մանրէազերծված սերուցք և բարձր ուլտրաջերմային մշակման ենթարկված սերուցք, հարած սերուցք և սերուցք՝ հարելու համար, սերուցք ցածր յուղայնությամբ (անարատ)
01.4.3	Խտացրած սերուցք (անարատ)
01.4.4	Սերուցքի փոխարինիչներ
01.5	Չոր կաթ, չոր սերուցք, չոր փոխարինիչներ (անարատ)
01.5.1	Չոր կաթ, չոր սերուցք (անարատ)
01.5.2	Չոր կաթի և չոր սերուցքի փոխարինիչներ
01.6	Պանիրներ և պանիրների փոխարինիչներ
01.6.1	Թարմ պանիրներ
01.6.2	Հաստնացած պանիրներ
01.6.2.1	Հաստնացած պանիրներ՝ ներառյալ կեղևը
01.6.2.2	Հաստնացած պանիրների կեղևը
01.6.2.3	Պանրի փոշի (նախատեսված, օրինակ՝ պանրային սոուսներ պատրաստելու համար)
01.6.3	Ալբոմինաշիճուկային պանիրներ
01.6.4	Հալած պանիրներ
01.6.4.1	Անարատ հալած պանիրներ
01.6.4.2	Բուրավետիչներ պարունակող հալած պանիրներ՝ ներառյալ միրգ, բանջարեղեն, միս և այլն պարունակող պանիրները
01.6.5	Պանրի փոխարինիչներ

- 01.6.6 Պանիրներ՝ ստացված շիճուկային սպիտակուցներից
- 01.7 Կաթնային աղանդեր (օրինակ՝ պուդինգներ, մրգային կամ բուրավետացված յոգուրտներ)
- 01.8 Շիճուկ և շիճուկային մթերք՝ բացառությամբ շիճուկային պանիրների
 - 01.8.1 Հեղուկ շիճուկ և շիճուկից պատրաստված մթերքներ՝ բացառությամբ շիճուկային պանիրների
 - 01.8.2 Չոր շիճուկ և չոր շիճուկից պատրաստված մթերք՝ բացառությամբ պլոմիինաշիճուկային պանիրների

- 02.0 Ճարպեր, ձեթեր և ճարպային էմուլսիաներ (սփրեդ)
- 02.1 Ջրազերծված յուղեր և ճարպեր
 - 02.1.1 Յուղ, ջրազերծված կաթնայուղ
 - 02.1.2 Բուսական ձեթեր և յուղեր
 - 02.1.3 Խոզի հալած ճարպ, սննդային ճարպ, ձկան յուղ և կենդանական այլ ճարպեր
- 02.2 Ճարպային էմուլսիաներ (սփրեդ), հիմնականում «ջուրը յուղում» տիպի
 - 02.2.1 Ճարպային էմուլսիաներ (սփրեդ)՝ 80%-ից ավելի ճարպ պարունակող
 - 02.2.1.1 Կովի կաթից կարագ և հալած յուղ
 - 02.2.1.2 Մարգարին և նմանատիպ սննդամթերք
 - 02.2.1.3 Կարագի և մարգարինի խառնուրդներ
 - 02.2.2 Ճարպային էմուլսիաներ (սփրեդ)՝ 80%-ից քիչ ճարպ պարունակող
- 02.3 Ճարպային էմուլսիաներ (սփրեդ), հիմնականում «յուղը ջրում» տիպի՝ ներառյալ ճարպային էմուլսիաների (սփրեդի) հիմքով խառնակազմ և (կամ) բուրավետացված մթերքները
- 02.4 Ճարպային հիմքով աղանդեր՝ բացառությամբ 01.7 խմբի
- 03.0 Սննդային սառույց՝ ներառյալ օշարակը և մրգային սառույցը

- 04.0 Պտուղներ և բանջարեղեն (ներառյալ սնկերը, արմատապտուղները, պալարապտուղները, ընդավորները, հավեն), ջրիմուռներ, ընկույզներ և արևածաղկի սերմեր
- 04.1 Պտուղներ
 - 04.1.1 Թարմ պտուղներ
 - 04.1.1.1 Չմշակված թարմ պտուղներ
 - 04.1.1.2 Մակերևութային մշակված թարմ պտուղներ
 - 04.1.1.3 Կեղևահանված կամ կտրատված թարմ պտուղներ
 - 04.1.2 Վերամշակված պտուղներ
 - 04.1.2.1 Սառեցված պտուղներ
 - 04.1.2.2 Չորացրած պտուղներ
 - 04.1.2.3 Պտուղներ՝ քացախում, յուղում կամ աղաջրում
 - 04.1.2.4 Պահածոյացված կամ շշպցված (պաստերացված) պտուղներ
 - 04.1.2.5 Ջեմեր, դոնդոլներ, մարմելադներ
 - 04.1.2.6 Պտղային հիմքով մածուկներ՝ բացառությամբ 04.1.2.5 խմբի
 - 04.1.2.7 Շաքարած պտուղներ
 - 04.1.2.8 Պտղային կիսահումք՝ ներառյալ պտղամիսը, այուրեն, մրգային տոպայինգը և կոկոսի կաթը
 - 04.1.2.9 Պտղային հիմքով աղանդեր՝ ներառյալ մրգային բուրավետիչներով՝ ջրային հիմքով աղանդերը
 - 04.1.2.10 Պտուղների խմորումից ստացված մթերք
 - 04.1.2.11 Լցոններ՝ պտղային թխվածքների համար
 - 04.1.2.12 Խոհարարական մշակման ենթարկված պտուղներ

- 04.2 Բանջարեղեն (ներառյալ սնկերը, արմատապտուղները, պալարապտուղները, ընդավորները, հավվեն), ջրիմուռներ, ընկույզներ և արևածաղկի սերմեր
- 04.2.1 Թարմ բանջարեղեն (ներառյալ սնկերը, արմատապտուղները, պալարապտուղները, ընդավորները, հավվեն), ջրիմուռներ, ընկույզներ և արևածաղկի սերմեր
- 04.2.1.1 Չմշակված թարմ բանջարեղեն (ներառյալ սնկերը, արմատապտուղները, պալարապտուղները, ընդավորները (ներառյալ սոյան), հավվեն), ջրիմուռներ, ընկույզներ և արևածաղկի սերմեր
